

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 9-ի N 836-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշման

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՁԵՎԸ
ԵՎ ԱՅՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են բնապահպանական պետական տեսուչների (այսուհետ՝ պետական տեսուչ) համազգեստի (այսուհետ՝ համազգեստ) ձևի և կրման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՁԵՎԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2. Պետական տեսուչի համազգեստը կազմված է՝

1) **շապիկ կարճաթև (պոլո մոդելի)**՝ կանաչավուն բամբակյա կտորից: Շապիկի հետևանասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից՝ ծալովի օձիքով, կրծքամասում՝ 3 կոճակներով՝ 11 սմ տրամագծով կոճկվող կափույրով, թևերը՝ կարճ, երկակի կարով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կաչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը: Շապիկի թևերին կարվում են շրջանաձև կաչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ձախ թևին ամրացվում է Տեսչական մարմնի տարբերանշանը, իսկ աջ թևին՝ Հայաստանի Հանրապետության դրոշը (նկարներ 3, 4): Պետական տեսուչին տրամադրվում է երկուակյան կարճաթև շապիկ, որը կրում է մեկ տարի ժամկետով.

2) **շապիկ երկարաթև (պոլո մոդելի)**՝ մուգ կանաչավուն կտորից: Շապիկի հետևանասը և առաջամասը բաղկացած են 2 կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝

3 կոճակներով կոճկվող կափույրով, հետևանաար՝ վերին կտրվածքով, թևերը՝ երկար, 2 կոճակներով կոճկվող թեզանիքներով: Շապիկի պարանոցից ներքև մշակվում է վրադիր կտոր, որի վրա մշակվում են 3 օղակներ և կարվում 3 կոճակներ՝ 10 մմ տրամագծով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կաչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը: Ներքևում՝ կարագծերում անցկացված է էլաստիկ ժապավեն: Շապիկի թևերին կարվում են շրջանաձև կաչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են Տեսչական մարմնի տարբերանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը (նկարներ 5, 7): Պետական տեսուչին տրամադրվում է երկուական երկարաթև շապիկ, որը կրում է երկու տարի ժամկետով.

3) **տաքատ կիսաբամբակյա՝** մուգ կանաչավուն կիսաբամբակյա կտորից: Գոտին՝ 10 մմ լայնությամբ 5 գոտեմակողերով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետևանաարի միացման կարի վրա: Կոճկվում է 15 մմ տրամագծով կոճակով, 16 սմ երկարությամբ շղթայով: Կողային գրպանները թեք են՝ 16 սմ բացվածքով: Թեք գրպանների ներքևի մասում կարվում են մեծ գրպաններ: Առաջամասում՝ մինչև ծնկները, մշակվում է աստառ: Հետևանաարի աջ կողմում ներկարված գրպան՝ 13-14 սմ բացվածքով (նկարներ 2, 3, 5): Պետական տեսուչին տրամադրվում է երկուական տաքատ, որը կրում է երկու տարի ժամկետով.

4) **տաքատ կիսաբրդյա (50 % բուրդ, 50 % սինթետիկ)՝** մուգ կանաչավուն կիսաբրդյա կտորից: Գոտին՝ 20 մմ լայնությամբ 5 գոտեմակողերով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետևանաարի միացման կարի վրա: Կոճկվում է 15 մմ տրամագծով կոճակով, 16 սմ երկարությամբ շղթայով: Կողային գրպանները թեք են՝ 16 սմ բացվածքով: Թեք գրպանների ներքևի մասում կարվում են մեծ գրպաններ: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ: Հետևանաարի աջ կողմում ներկարված գրպան՝ 13-14 սմ բացվածքով (նկարներ 1, 6): Պետական տեսուչին տրամադրվում է երկուական տաքատ, որը կրում է երեք տարի ժամկետով.

5) **կիսաշրջագետս**՝ կազմված առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց՝ մուգ կանաչավուն կիսաբամբակյա կտորից, ուղիղ կտրվածքով, մինչ ծունկը ծածկող երկարության: Հետևամասի ներքևում 9 սմ բացվածքով, հետևից վերնամասը կոճկվում է 16 սմ երկարությամբ շղթայով, որը գոտու վրա կոճկվում է 14 սմ երկարությամբ 1 կոճակ օղակով (սկարներ 4, 7, 8): Պետական տեսուչին տրամադրվում է երկուական կիսաշրջագետս, որը կրում է երկու տարի ժամկետով.

6) **սվիտեր**՝ մուգ կանաչավուն ակրիլանից (400 գրամ քմ), կյոր վզով: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կաչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը: Ուսագլուխների և արմունկների հատվածում ամրացվում է կանաչ գույնի կտոր: Թևերին կարվում են շրջանաձև կաչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են Տեսչական մարմնի տարբերանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը: Պետական տեսուչը սվիտերը կրում է երկու տարի ժամկետով.

7) **կիսավերարկու (գարնանային/աշնանային)**՝ մուգ կանաչավուն անջրանցիկ (40 % բամբակ, 60 % սինթետիկ) անջրաթափանց) կտորից: Կիսավերարկուն բաղկացած է թևերից, կանգուն օձիքից: Օձիքը երկակի է, ներսում շղթայի տակ նախատեսված է գլխարկ: Գլխարկն ունի կարգավորիչ, կաչուն ժապավեն: Կիսավերարկուն կոճկվում է 60-65 սմ երկարությամբ շղթայով: Գոտու կողային մասերն ունեն 14-20 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կաչուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը, իսկ թիկունքի մասում՝ «Բ Ը Տ Մ» բառերը: Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված են 16 սմ բացվածքով գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերնամասում կափույրի տակ ներկարվում են 15 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում ծոցագրպան: Թևերը երկկարանի են: Ներքևում՝ կարագծերում անցկացված է էլաստիկ ժապավեն: Կիսավերարկուի թևերին կարվում են շրջանաձև կաչուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ձախ թևին ամրացվում է Տեսչական մարմնի

տարբերանշանը, իսկ աջ թևքին՝ Հայաստանի Հանրապետության դրոշը (սկարներ 6, 8): Պետական տեսուչը կհսավերարկուն կրում է երեք տարի ժամկետով.

8) **կհսավերարկու (ձմեռային)**՝ մուգ կանաչավուն անջրանցիկ (անջրաթափանց, օքսֆորդ) կտորից: Կհսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, թևքերից, հետ ծավոն օձիքից և հանվող (շղթա) գլխարկից, որն ունի կարգավորիչ, կաշուն ժապավեն: Կհսավերարկուն մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և հանվող տաք ներդիրով՝ կայծակաճարմանդով (շղթա), բաճկոնին կոճկվում է հանովի արհեստական մորթե օձիք, որը կոճկվում է 7 օղակներով և բաճկոնի օձիքին կարված 7 հատ 15 մմ տրամագծով պլաստմասսայե կոճակներ: Կրծքամասում՝ աջ և ձախ կողմերում, 10-11 սմ երկարությամբ, 2,0 սմ լայնությամբ կաշուն ժապավեններ, որտեղ ամրացվում են անունը, ազգանունը և ստորաբաժանումը, իսկ թիկունքի մասում՝ «Բ Ը Տ Մ» բառերը: Կհսավերարկուն կոճկվում է 60-65 սմ երկարությամբ շղթայով: Գոտու կողային մասերն ունեն 14-20 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Թիկնամասը և լանջափեշերը՝ կրծքամասում կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված են 16 սմ բացվածքով գրպաններ: Առջևի 2 լանջափեշերի վերևամասում կափույրի տակ ներկարվում են 15 սմ երկարությամբ շղթայով փակվող գրպաններ, ձախ կողմում ծոցագրպան: Թևքերը երկկարանի են: Ներքևում՝ կարագծերում անցկացված է էլաստիկ ժապավեն: Կհսավերարկուի թևքերին կարվում են շրջանաձև կաշուն ժապավեններ, տրամագիծը՝ 80 մմ, ուսակարից 70 մմ ներքև, որտեղ ամրացվում են Տեսչական մարմնի տարբերանշանը և Հայաստանի Հանրապետության դրոշը (սկար 1): Պետական տեսուչը կհսավերարկուն կրում է երեք տարի ժամկետով.

9) **գլխարկ ամառային**՝ մուգ կանաչավուն գլխարկ (կեպի), բամբակ 100 %, հետնամասում ամրանում է ճարմանդով: Ջրադիմացկուն, բարձրորակ, խիտ գործվածք է: Առաջամասում ասեղնագործվում է Տեսչական մարմնի տարբերանշանը (սկար 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8): Պետական տեսուչը մեկ գլխարկը կրում է երկու տարի ժամկետով.

10) **գլխարկ ձմեռային**՝ մուգ կանաչավուն կիսաբամբակյա ձմեռային տաք գլխարկ (55-60 չափսերի), առաջամասում ասեղնագործվում է Տեսչական մարմնի տարբերանշանը: Պետական տեսուչը մեկ գլխարկը կրում է երկու տարի ժամկետով.

11) **կոշիկ կիսաճտքավոր սպորտային ձմեռային**՝ կանաչավուն (կամ սև) գույնի կաշվից և նեյլոնից: Ներքանը պատրաստվում է մաշակայուն նյութից: Քթամասը և կրնկամասը կոշտ: Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը բարձր ճնշման տակ միացված են ներքանին սոսնձման եղանակով: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 5-6 զույգ մետաղյա փոլակներ: Կապումն իրականացվում է կանաչավուն (կամ սև) գույնի քուղերով: Քուղերն ամրացված են կտորի վրա լրացուցիչ կարված կաշվե եզրային ելուստին: Լեզվակը կարված է առաջամասից մինչև աջ ու ձախ չորրորդ առանցքը: Կոշիկը ներսամասից մինչև ներդիր բացվում է շղթայով: Շղթայի ամբողջ երկարությամբ առկա է կաշվե ներդիր: Կոշիկը նախատեսված է ձմռանը կրելու համար, առաջամասը և ճտքերը ջերմամեկուսիչ նյութից: Ներդիրը կտորե, երկակի խտության: Պետական տեսուչը կիսաճտքավոր սպորտային ձմեռային կոշիկը կրում է երկու տարի ժամկետով.

12) **կոշիկ սպորտային**՝ կանաչավուն (կամ սև) գույնի կաշվից և նեյլոնից: Ներքանը պատրաստվում է մաշակայուն նյութից: Քթամասը և կրնկամասը կոշտ: Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը բարձր ճնշման տակ միացված են ներքանին սոսնձման եղանակով: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 4-5 զույգ մետաղյա փոլակներ: Կապումն իրականացվում է կանաչավուն (կամ սև) գույնի քուղերով: Քուղերը ամրացված են կտորի վրա լրացուցիչ կարված կաշվե եզրային ելուստին: Կոշիկը ունի բարձր օդաթափանցություն: Ներդիրը կտորե, երկակի խտության: Պետական տեսուչը սպորտային կոշիկը կրում է երկու տարի ժամկետով.

13) **գոտի տաբատի**՝ սինթետիկ գործվածքից, 35 մմ լայնությամբ, մետաղական ճարմանդով: Պետական տեսուչը տաբատի գոտին կրում է երկու տարի ժամկետով.

14) **գրպանիկներ գոտիի համար**՝ սև սինթետիկ նյութից, ամրացվում են գոտիի վրա: Նախատեսված են զենք, հատուկ միջոցներ և պարագաներ կրելու համար: Պետական տեսուչը գոտիի համար գրպանիկները կրում է երկու տարի ժամկետով:

3. ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԶԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ԿՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Պետական տեսուչին համազգեստը տրամադրում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը՝ համաձայն սույն որոշմամբ սահմանված պայմանների:

4. Պետական տեսուչի համազգեստի առանձին մասերը կրելու առանձնահատկություններն են՝

1) գլխարկ կրելու կարգը՝ գլխարկը կրում են ուղիղ և ազատ ոճով.

2) համազգեստը կրելու կարգը՝

ա. վերնազգեստը և տաբատը պետք է կրել մաքուր, հարդարված և արդուկված վիճակում,

բ. վերնազգեստի գրպանների կափույրները պետք է դուրս հանված լինեն,

գ. վերնաշապիկը բաճկոնի հետ կրելու դեպքում վերնաշապիկի օձիքի հետևի մասը պետք է լինի բաճկոնի օձիքի հետ հավասար կամ 0,5 սմ-ից ոչ ավելի բարձրությամբ:

5. Համազգեստը կրում են հիմնական կառուցվածքային՝ Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչության, Ընդերքի վերահսկողության վարչության, Կենսաբազմազանության վերահսկողության վարչության և տարածքային ստորաբաժանման բաժնի պետերը, Պետական տեսուչներն ու Տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետները՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ:

6. Համազգեստը պետք է համապատասխանի սույն կարգի պահանջներին և պահվի անթերի վիճակում:

7. Արգելվում է փոփոխել կամ հեռացնել համազգեստին ամրացված տարբերանշանները և գրառումները:

8. Պետական տեսուչի համազգեստի կրման կարգի 5-րդ կետում նշված աշխատակիցների մեղքով սահմանված ժամկետներից շուտ օգտագործման համար ոչ պիտանի դարձած համազգեստը փոխարինվում է նորով՝ պետական տեսուչի միջոցների հաշվին:

4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍԸ

Ձև Չմեռային

Ձև Ամառային



ՆԿԱՐ 1.



ՆԿԱՐ 2.



ՆԿԱՐ 3.



ՆԿԱՐ 4.

Ձև Գարնանային / Աշնանային



ՆԿԱՐ 5.



ՆԿԱՐ 6.



ՆԿԱՐ 7.



ՆԿԱՐ 8.



ՆԿԱՐ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



ՆԿԱՐ 10»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ